ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 21 » « հունվարի » 2025թ.**

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ա.Սահակյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ս.Պետրոսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Տ.Մանուկյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Մ.Գևորգյան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

Բացակայում են՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ա.Պետրոսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Լ.Սինանյան

1. Հանձնաժողովի անդամի բացակայության և նիստը նախագահող ընտրելու մասին

1.1. Հանձնաժողովի նախագահ Ա.Պետրոսյանը նիստին ներկա չէ (հիմք՝ շրջակա միջավայրի նախարարի 14.01.2025թ. «Ա.Պետրոսյանի լիազորությունները դադարեցնելու մասին» №9-Ա հրաման) և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 26-րդ կետի 1-ին ենթակետը նիստը նախագահում է հանձնաժողովի անդամ Ա.Սահակյանը:

2. Տեղեկություն «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով մրցույթի գնման առարկայի նախահաշվային գնի մասին

2.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով մրցույթի գնումը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիմքով:

3. Տեղեկություն «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով մրցույթի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

3.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2025 թվականի հունվարի 21-ին, ժամը 10:00-ին: Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)՝ Լ.Սինանյանը բացումը կատարել է հեռավար:

4. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները

Մասնակցի անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցե	ՀՎՀՀ	Հեռախոսահամար
«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ	hgh.company@mail.ru	02634261	095 909 009

5. Տեղեկություններ գնահատող հանձնաժողովի անդամների և քարտուղարի շահերի բախման վերաբերյալ

5.1. Գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո ստորագրել են հայտարարություն, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունեն շահերի բախում:

6. Տեղեկություններ հրավերի պահանջներին համապատասխան հայտերի էլեկտրոնային ձևով կազմման և ներկայացման վերաբերյալ

6.1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Ա.Սահակյան)

7.1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ա.Սահակյան)

8.1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/հ	Գնման առարկայի՝ ծառայության անվանումը	«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ	
		Գինն առանց ԱԱՀ	գինը
1	Օդային եղանակով նյութերի ցրման ծառայություններ	148 880 000	148 880 000

9.1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

10.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով մրցույթի հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

11. Տեղեկություն «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով բաց մրցույթիը մասնակցելու պահանջներին բավարարելու մասին

11.1. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների և դրանց փոխկապակցված անձանց ցուցակները և արձանագրել է, որ մրցույթին հայտ ներկայացրած մասնակիցները վերոնշյալ ցուցակներում ընդգրկված չեն:

12. Հանձնաժողովը որոշեց՝

(Ա.Սահակյան)

12.1. Հանձնաժողովի քարտուղարին՝

12.1.1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետը՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ին՝ առաջարկված գների նվազեցման շուրջ հրավիրել բանակցությունների մինչև 30 րոպե տևողությամբ, 2025 թվականի հունվարի 23-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

12.1.2. Ծանուցել բաց մրցույթի մասնակցին բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

13.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը

(Ա.Սահակյան)

13.1. «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-25/09» ծածկագրով մրցույթի մասնակցի հետ բանակցությունների նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրը՝ 2025 թվականի հունվարի 23-ին, ժամը 11:00-ին, հասցեն՝ շրջակա միջավայրի նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ 529 սենյակ հասցեում:

14. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Ա.Սահակյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) _____ Ս.Պետրոսյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ _____ Տ.Մանուկյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) _____ Մ.Գևորգյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) _____ Լ.Զոհրաբյան